



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 4 (36)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2005 թվականի նոյեմբերի 28-ից

Երեւան 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	5, 95
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 97
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	19, 109
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	21, 111
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	23, 113
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	25, 115
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	29
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման	
նշանների մասին	31
ՑՈՒՑԻՉՆԵՐ	81
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	85
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	117

ՄԱՍ 2

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	5
Տեղեկություններ գրանցված ֆիրմային անվանումների	
հայտերի մասին	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-267 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.armpatent.org>

E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**ЧАСТЬ 1**

ИЗОБРЕТЕНИЯ	5, 95
Сведения о выданных патентах	7, 97
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	19, 109
Сведения о выданных патентах	21, 111
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	23, 85
Сведения о выданных патентах	21, 87
ТОВАРНЫЕ ЗНАКИ	29
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	31
УКАЗАТЕЛИ	81
СООБЩЕНИЯ	85
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	117

ЧАСТЬ 2

ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ	5
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 2003 г.	7

CONTENTS**PART 1**

INVENTIONS
Information on granted patents
UTILITY MODELS
Information on granted patents
INDUSTRIAL DESIGNS
Information on granted patents
TRADE MARKS
Information on registered trade marks and service marks
INDEXES
REPORTS
TWO-LETTER CODES

PART 2

TRADE NAMES
Information on registrated firm name's applications in 2003.

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատու, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A01C 3/00 (11) 1649 (13) A2
(21) P20050044 (22) 13.04.2005
(42) 13.06.2005

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ստեփան Ենոքի Մարգարյան (AM), Արտյուշա Ջավադի Աղասարյան (AM), Վրեժ Ռուանդի Միերյան (AM), Կամո Համլետի Եղոյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Գոմաղբի զտման սարք

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ գոմաղբի մշակման անաերոբային պայմաններում գոմաղբը մեխանիկական խառնուրդներից (ցամքար, խոտի ու ծղոտի մնացուկներ) անջատող սարքերին:

Սարքն ունի ծակոտկեն մակերեսային եւ քերակներ ունեցող փոխադրիչ: Ծակոտկեն մակերեսային ջրիկացված գոմաղբի եւ մեխանիկական մնացուկների զտման համար նախատեսված ծակոտկեն հատակով գոմաղբառվակ է: Սարքը լրացուցիչ ունի գոմաղբառվակի վերելում անշարժ հեմարանին կոշտ ամրակցված, գոմաղբը սեղմող առաձգական պատնեշ, որի ճնշմամբ գոմաղբի հեղուկ չափամասը գոմաղբառվակի անցքերից թափվում է նրա տակը գտնվող փոսիկի մեջ: Փոսիկի հատակին ամրակցված է գոմաղբի զտված հեղուկ չափամասի հոսքը դեպի կուտակող ավազան ուղղող խողովակ:

Գոմաղբի ջրիկացումը նույնպես կատարում են անմիջապես գոմաղբառվակում:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 1 նկ.:

(51) 7 A01C 15/00 (11) 1650 (13) A2
(21) P20050058 (22) 03.05.2005
(42) 12.05.2005

(71) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM), Մարինե Հենրիկի Բարսեղյան (AM)

(72) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM), Արմեն Ստեփանի Մարգարյան (AM), Մարգարիտա Նորիկի Կիրակոսյան (AM), Մարինե Հենրիկի Բարսեղյան (AM)

(73) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM), Մարինե Հենրիկի Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31(AM)

(54) Համապիտանի պարարտանյութացրիչ (տարբերակներ)

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ պարարտանյութացրիչ մեքենաներին:

Պարարտանյութացրիչն ունի թափք, պարարտանյութը մատուցող փոխադրիչ, պտուտակրիչով եւ խառնիչ-մատուցիչով աշխատանքային ցրող օրգան եւ կարգավորվող հավասարիչ: Առաջին տարբերակում թափքի աջ եւ ձախ կողերին ամրակցված են թափքից խառնիչի թմբուկին մատուցվող զանգվածի լայնության սահմանափակող ուղղորդիչներ (10): Երկրորդ տարբերակում տեղակայված են նաեւ սուբստրատը կենսահումուսի պատրաստման խրամատ ուղղորդող թեւեր (12):

Լայնացվում են պարարտանյութացրիչի ֆունկցիոնալ հնարավորությունները, ապահովվում է մեկ անցումով խրամատի ամբողջ լայնությամբ սուբստրատի համաչափ փռումը, 2 անկախ կետ, 6 նկ.:

(51) 7 A23L 1/317 (11) 1651 (13) A2
(21) P20050015 (22) 23.02.2005
(42) 12.05.2005

(71) Էմմա Սահակյան (AM), Իգիթ Իգիթյան (AM)
(72) Էմմա Սահակյան (AM), Իգիթ Իգիթյան (AM), Աննա Ռաշտոյան (AM), Վլադիմիր Հովհաննիսյան (AM), Ռազմիկ Բեգլարյան (AM)

(73) Էմմա Սահակյան, Երեւան, Ռուբինյանց 21, բն. 36 (AM), Իգիթ Իգիթյան, Երեւան, Հր. Քոչարի փող. 1-ին նրբ. 6 (AM)

(54) Տավարի մսից հումապխտած պատրաստվածքի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ տավարի մսից հումապխտած պատրաստվածքների ստացման եղանակներին:

Միսը կտրատում են, ավելացնում են 5 % կերակրի աղ, հասունացնում են 5-6 օր 2-4°C

ջերմաստիճանում: Ապա միսը վանում են 1 ժամ, 24 ժամ հետո մանրացնում են մսահատիչով, լցոնը տեղադրում են թանգիֆե պարկի մեջ, մամլում երկու անգամ 6-8°C ջերմաստիճանում եւ չորացնում 10-12°C ջերմաստիճանում: Առաջին չորացումն անց են կացնում առաջին մամլումից հետո երեք օրվա ընթացքում եւ 70 - 75% օդի հարաբերական խոնավության պայմաններում, ապա հովվելով շրջափչում՝ 1-2 մ/վայրկյանում օդի շարժման արագությամբ: Երկրորդ անգամ չորացնում են երկրորդ մամլումից հետո 10-12 օրվա ընթացքում 70 - 78% օդի հարաբերական խոնավության պայմաններում, ապա հովվելով շրջափչում՝ 1-2 մ/վայրկյանում օդի շարժման արագությամբ: Ստացված մսամթերքը հանում են թանգիֆե պարկից եւ չամանապատում են:

Ապահովվում է պահպանման ժամկետի երկարացում, բարելավվում են համային հատկությունները:

(51) 7 A23L 3/28 (11) 1652 (13) A2
A23C 3/07

(21) P20050026 (22) 21.03.2005
(42) 13.06.2005

(71) ՍՊԸ «ԱԳՐՈՅՈԼԴԻՆԳ» (AM)

(72) Արտուշ Սիմոնյան (AM), Արմեն Խեչոյան (AM), Ռազմիկ Բեգլարյան (AM), Ստյոպա Շաքարյան (AM)

(73) «Ագրոհոլդինգ» ՍՊԸ, Շիրակի մարզ, գյուղ Դարիկ (AM)

(54) Կաթի պաստերացման կայանք

(57) Գյուտը վերաբերում է կաթի արդյունաբերությանը, մասնավորապես՝ հում կաթի ճառագայթահարումով մշակման կայանքներին:

Կայանքն ունի իրան, որի մեջ ուղղահայաց հարթությունում տեղակայված են հորիզոնական կվարցե խողովակներ, որոնց մեջ տեղադրված են անդրամանուշակագույն ճառագայթման աղբյուրներ: Հոսելով խողովակների արտաքին մակերեսույթով, հում կաթը ենթարկվում է պաստերացման եւ հոսում դեպի մշակված կաթի հավաքարան:

Բացառվում է կաթի աղտոտումը ճառագայթման աղբյուրների վնասվածքների դեպքում, 2 նկ.

(51) 7 A43B 7/22 (11) 1653 (13) A2
A61F 5/14

(21) P20050062 (22) 11.05.2005
(42) 13.06.2005

(71) Աննա Սինոպյան (AM), Ալեքսան Արզումանյան (AM)

(72) Աննա Սինոպյան (AM), Ալեքսան Արզումանյան (AM)

(73) Աննա Սինոպյան, Գյումրի, Իսահակյան 8, բն. 52 (AM), Ալեքսան Արզումանյան, Գյումրի, Սելյան 47, բն. 5 (AM)

(54) Պրոֆիլակտիկ միջատակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ օրթոպեդիային, կարող է օգտագործվել հարթաթաթության բուժման եւ պրոֆիլակտիկայի համար:

Պրոֆիլակտիկ միջատակն ունի մետաղյա թիթեղից ներդիր, որը երկայնական կտրվածքում ունի տանգենտիդին մոտ ձև:

Թիթեղի մի ծայրը ամրացված է միջատակի երկայնական ակոսում:

Հնարավորություն է ստեղծվում ներդիրը տեղադրել միջատակի անհրաժեշտ տեղում՝ կախված հարթաթաթության բնույթից, 2 նկ.:

(51) 7 A44C 17/04 (11) 1654 (13) A2

(21) P20050052 (22) 22.04.2005
(42) 13.06.2005

(71) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM), Աղասի Սամվելի Պողոսյան (AM)

(72) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM), Աղասի Սամվելի Պողոսյան (AM)

(73) Ալեքսան Մկրտչի Արզումանյան, Գյումրի, Սելյան 47, բն. 5 (AM), Աղասի Սամվելի Պողոսյան, Գյումրի, Արեւելյան 1, բն. 34 (AM)

(54) Ոսկերչական իրի ներդիրի ամրակցման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ոսկերչության բնագավառին, մասնավորապես՝ ազուցարաններում ներդիրների ամրակցման տեխնոլոգիային:

Ոսկերչական իրի ներդիրը տեղադրում են ազուցարանի՝ կաստի մեջ, հավասարաչափ եւ անընդմեջ շրջասեղմում են ներդիրի պատերը բոլոր կողմերից կաստի մետաղի ամրապնդիչ գոտիով: Նախքան ներդիրը կաստի մեջ տեղա-

դրելը ռունդիստը մշակում են հատած կոնի կամ սեւպածեւ ակոսի տեսքով: Շրջասեղմումը կատարում են այնպես, որ կաստի ամրապնդիչ գոտին ընդգրկի ներդիրը ռունդիստի լայնության սահմաններում:

Ապահովվում է ներդիրի ամրակցման հուսալիությունը, պահպանվում է դրա լուսախաղը:

- (51) 7 A47G 19/03 (11) 1655 (13) A2
(21) P20050013 (22) 17.02.2005
(42) 12.05.2005
(71) Խաչատուր Ասատրյան (AM)
(72) Խաչատուր Ասատրյան (AM)
(73) Խաչատուր Ասատրյան, Երեւան, Աղայան 7, բն. 78(AM)
(54) Միանգամյա օգտագործման սպասքի պատրաստման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է միանգամյա օգտագործման սպասքի պատրաստման եղանակներին, մասնավորապես՝ սառցե սպասքի պատրաստմանը:
- Հեղուկը լցնում են կաղապարի մեջ եւ ենթարկում սառեցման: Կաղապարի հատակին պատրաստում են օղակաձեւ առվակ, որի մեջ բացակով տեղադրում են բարակապատ ներդրակ՝ ներդրակի բկանցքում սառցե թաղանթ ստանալու համար: Հեղուկի սառեցումից հետո ստացված սպասքը կաղապարից հանում են ներդրակի եւ սառցե թաղանթի հետ միասին:

Բացառվում է սառույցի հալվելու դեպքում դրա ներթափանցումը սպասքի պարունակության մեջ եւ կրկնական օգտագործման հնարավորությունը, 1 նկ.:

- (51) 7 A47K 10/06 (11) 1656 (13) A2
(21) P20050036 (22) 30.03.2005
(42) 13.06.2005
(71) Արսեն Ավետիսյան (AM)
(72) Արսեն Ավետիսյան (AM)
(73) Արսեն Ավետիսյան, Երեւան, Ավան-Առինջ թաղամաս 1/1, բն. 2(AM)
(54) Սրբիչներ չորացնող կախիչ
(57) Կախիչն ունի մետաղե իրան, նիքրոմե լարից պատրաստված տաքացիչ: Իրանն իրակա-

նացված է հարթ թիթեղի տեսքով: Կախիչը լրացուցիչ ունի ջերմային կարգավորիչ եւ ապակե կափարիչ, որով ծածկված են իրանը եւ դրա վրա տեղակայված տաքացիչը: Կափարիչն ունի անցքեր, որոնց միջոցով իրականացվում է կապը ներքին եւ արտաքին միջավայրերի միջեւ: Կախիչի աշխատանքային ջերմաստիճանը չի գերազանցում 100°C:

Բարձրացվում է օգտագործման հարմարավետությունն ու անվտանգությունը, 4 նկ.:

- (51) 7 A61C 13/00 (11) 1657 (13) A2
(21) P20050018 (22) 02.03.2005
(42) 12.05.2005
(71) Սերգեյ Խաչատրյան (AM)
(72) Սերգեյ Խաչատրյան (AM)
(73) Սերգեյ Խաչատրյան, Երեւան, Կիելյան 5, բն. 60 (AM)
(54) Ատամի անշարժ կամրջաձեւ պրոթեզի պատրաստման եղանակ (տարբերակներ)
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ օրթոպեդիկ ստոմատոլոգիային: Ապակակղանացված ատամների դեպքում որպես հենարանային տարր պատրաստում են նեղուցով սնամեջ ատամնապսակային բույթ, որը տեղադրում են հենարանային ատամի խոռոչի մեջ, ամրացնում են բերանի խոռոչում եւ երեսպատում կոմպոզիցիոն նյութով:

Կենդանի ատամների դեպքում որպես հենարանային տարր օգտագործում են նեղուցով մետաղյա հենարանային օղակ, որը տեղադրում են ատամի հասարակածի շրջանում տաշմամբ ստացված շրջանաձեւ աստիճանի վրա, ամրացնում են եւ երեսպատում կոմպոզիցիոն նյութով:

Ապահովվում է հենարանային ատամների տաշման նվազեցում եւ պրոթեզի ամրացման հուսալիության բարձրացում, 3 անկախ կետ, 9 նկ.:

- (51) 7 A61K 9/06 (11) 1658 (13) A2
(21) P20050030 (22) 24.03.2005
(42) 13.06.2005
(71) Աշոտ Աշոտյան (AM), Լիլիթ Աշոտյան (AM)
(72) Աշոտ Աշոտյան (AM), Լիլիթ Աշոտյան (AM)
(73) Աշոտ Աշոտյան, Երեւան, Սունդուկյան 26,

բն. 1 (AM), Լիլիթ Աշոտյան, Երեւան, Սունդուկյան 26, բն. 1 (AM)

(54) Կելոիդային սպինների բուժման եւ/ կամ դրանց գոյացման կանխարգելման եղանակ

(57) Հայտարկվում է կելոիդային սպինների բուժման եւ/ կամ դրանց գոյացման կանխարգելման եղանակ, ըստ որի օգտագործում են կելոիդալիտիկ ակտիվություն ունեցող տեղային նշանակության պատրաստուկ: Պատրաստուկը ներառում է (զանգվ. %). կվենուլ տերեւներ՝ 8-10, ներկիչ տորոնի արմատներ՝ 4-6, խարիի արմատներ եւ կոճղարմատներ՝ 3-5, խունկ՝ 2-4, մեղրամոմ՝ 20, կակաոյի յուղ՝ 20, ձիթապտղի յուղ՝ մնացածը:

Կելոիդային սպինների բուժման համար պատրաստուկի բարակ շերտով վիրակապը դնում են սպիի վրա օրը մեկ անգամ, իսկ կանխարգելման համար՝ օրը երկու անգամ:

Կրճատվում է կելոիդային սպինների բուժման եւ/կամ դրանց գոյացման կանխարգելման տեղությունը:

(51) 7 A61K 35/74 (11) 1659 (13) A2
(21) P20050055 (22) 27.04.2005
(42) 13.06.2005

(71) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM)

(72) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM), Էդուարդ Հրաչյայի Գրիգորյան (AM), Էդուարդ Սեթի Սեկոյան (AM), Ռիտա Սուրենի Էմինյան (AM), Ռոզա Անուշավանի Մադոյան (AM)

(73) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM)

(74) Ա. Գալոյան

(54) Աղիքների դիսբիոզի բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է բժշկության բնագավառին, մասնավորապես՝ գաստրոէնտերոլոգիային եւ կարող է կիրառվել խախտված բիոցենոզի դեպքում մարսողական օրգանների տարբեր հիվանդությունների բուժման համար: Հիվանդին ներբերանային նշանակում են 150-ական մլ «Ջերմուկ» հանքային ջուր օրը 3 անգամ, ուտելուց 30 րոպե առաջ, որի 1մլ-ը ներառում է *L.acidophilus* 317/402 շտամի 5-20 միլիարդ կենդանի բջիջ: Միաժամանակ 880 կՀց տատանումների հաճախությամբ անդրաձայնով մշակում են հիվանդի որովայնի տիրույթը 4-6 րոպե տեւողությամբ եւ 0,2-0,4վտ/սմ² ինտենսիվությամբ եւ հարողնաշարային տիրույթը՝ 2-4 րոպե տեւողությամբ եւ 0,2վտ/սմ²

ինտենսիվությամբ, կամ ճառագայթահարում են մագնիսալազերով՝ ենթակարմիր ճառագայթման ընդգրկույթի անընդհատ ռեժիմում, 1.10⁻⁶մ ալիքի երկարությամբ հաստատուն մագնիսական դաշտում հիվանդի որովայնի տիրույթը 1-3 րոպե, իսկ հարողնաշարայինը՝ 1-2 րոպե տեւողությամբ:

Կրճատվում է բուժման տեւողությունը եւ բարձրացվում դրա արդյունավետությունը:

(51) 7 A61K 35/78 (11) 1660 (13) A2
(21) P20050073 (22) 23.05.2005
(42) 13.06.2005

(71) Լուսինե Մուրադյան (AM)

(72) Լուսինե Մուրադյան (AM)

(73) Լուսինե Մուրադյան, Երեւան, Մ.Սարյան 4, բն. 43 (AM)

(54) «Grape seed Extract-OPC» կենսաբանորեն արդյունավետ հավելանյութի կիրառումը պարօղոնտի հիվանդությունների բուժման համար

(57) Հայտնի է հակաօքսիդիչային ակտիվություն ունեցող «Grape seed Extract-OPC» կենսաբանորեն ակտիվ սննդային հավելանյութի կիրառումը որպես հակաստրեսային, իմունակարգավորող միջոց:

Հայտարկվում է հայտնի հավելանյութի կիրառումը պարօղոնտի հիվանդությունների բուժման համար:

(51) 7 A61K 35/78 (11) 1661 (13) A2
(21) P20050037 (22) 31.03.2005
(42) 13.06.2005

(71) Լուսինե Մուրադյան (AM), Կարեն Լալայան (AM)

(72) Լուսինե Մուրադյան (AM), Կարեն Լալայան (AM)

(73) Լուսինե Մուրադյան, Երեւան, Մ. Սարյան 4, բն. 43 (AM), Կարեն Լալայան, Երեւան, Սունդուկյան 3ա, բն. 26(AM)

(54) «Stress Guard» կենսաբանորեն արդյունավետ հավելանյութի կիրառումը պարօղոնտի հիվանդությունների բուժման համար

(57) Հայտնի է ադապտոգեն ազդեցություն ունեցող «Stress Guard» կենսաբանորեն արդյունավետ հավելանյութի կիրառումը որպես ստրեսի արդյունքում խախտված մետաբոլիկ գործըն-

թացների շտկման միջոցով օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակը մոբիլացնող միջոց:

Հայտարկվում է հայտնի հավելանյութի կիրառումը որպես պարօդոնտի հիվանդությունների բուժման դեղամիջոց:

(51) 7 A61K 38/04 (11) 1662 (13) A2
A61P 31/04
C12Q 1/18
(21) P20050012 (22) 17.02.2005
(42) 12.05.2005
(71) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Խաչիկ Բադալյան (AM)
(72) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Խաչիկ Բադալյան (AM)
(73) Արմեն Գալոյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 2ա, բն. 66 (AM), Սուրեն Գրիգորյան, Երեւան, Մազմանյան 5, բն. 59 (AM), Խաչիկ Բադալյան, Երեւան, Վ.Շենգավիթ 10-րդ փող. 2, բն. 45 (AM)
(54) Հակասիբիրախտային ակտիվություն ունեցող պեպտիդների համակցություն
(57) Գյուտը վերաբերում է հակամանրէային ակտիվություն ունեցող պեպտիդների համակցություններին, մասնավորապես՝ սիբիրախտի *Bacillus anthracis* հարուցչի դեմ: Որպես սիբիրախտի հարուցիչ օգտագործում են Ցենկովսկու երկրորդ վակցինայի *B.anthraxis* շտամը: Համակցությունը ներառում է երկու սինթետիկ պեպտիդ՝ հետեւյալ ամինաթթվային հաջորդականություններով.
 $\text{Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-NH}_2$ եւ $\text{Ala-Gly-Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-Gly-Val-Tyr}$:

Պեպտիդների հարաբերակցությունը համակցության մեջ հավասար է 1:1:

Ընդլայնվում է սիբիրախտի հարուցչի դեմ ակտիվ նյութերի տեսականին:

(51) 7 A61K 38/04 (11) 1663 (13) A2
A61P 31/04
C12Q 1/18
(21) P20050011 (22) 17.02.2005
(42) 12.05.2005
(71) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Խաչիկ Բադալյան (AM)

(72) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Խաչիկ Բադալյան (AM)

(73) Արմեն Գալոյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 2ա, բն. 66 (AM), Սուրեն Գրիգորյան, Երեւան, Մազմանյան 5, բն. 59 (AM), Խաչիկ Բադալյան, Երեւան, Վ.Շենգավիթ 10-րդ փող. 2, բն. 45 (AM)
(54) Հակասիբիրախտային ակտիվություն ունեցող պեպտիդ

(57) Գյուտը վերաբերում է հակամանրէային պեպտիդներին, մասնավորապես՝ հակասիբիրախտային ակտիվություն ունեցող պեպտիդներին: Որպես սիբիրախտի հարուցիչ օգտագործում են վակցինային *B.anthraxis* 55 (ВНИИВВиМ N 5) շտամը: Պինդ ֆազային սինթեզի եղանակով ստացված պեպտիդը ունի հետեւյալ ամինաթթվային հաջորդականությունը.

$\text{Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-NH}_2$:

Ընդլայնվում է սիբիրախտի հարուցչի դեմ ակտիվ նյութերի տեսականին:

(51) 7 A61K 38/04 (11) 1664 (13) A2
A61P 31/04
C12Q 1/18
(21) P20050010 (22) 17.02.2005
(42) 13.06.2005
(71) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Խաչիկ Բադալյան (AM)
(72) Արմեն Գալոյան (AM), Սուրեն Գրիգորյան (AM), Խաչիկ Բադալյան (AM)
(73) Արմեն Գալոյան, Երեւան, Եզնիկ Կողբացու 2ա, բն. 66 (AM), Սուրեն Գրիգորյան, Երեւան, Մազմանյան 5, բն. 59 (AM), Խաչիկ Բադալյան, Երեւան, Վ.Շենգավիթ 10-րդ փող. 2, բն. 45 (AM)
(54) Հակասիբիրախտային ակտիվություն ունեցող պեպտիդների համակցություն
(57) Գյուտը վերաբերում է հակասիբիրախտային ակտիվություն ունեցող պեպտիդների համակցություններին, մասնավորապես՝ սիբիրախտի *Bacillus anthracis* հարուցչի դեմ: Համակցությունը ներառում է երկու սինթետիկ պեպտիդ՝ հետեւյալ ամինաթթվային հաջորդականություններով.
 $\text{Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-NH}_2$ եւ $\text{Ala-Gly-Ala-Pro-Glu-Pro-Ala-Glu-Pro-Ala-Gln-Pro-Gly-Val-Tyr}$

Պեպտիդների հարաբերակցությունը համակցության մեջ հավասար է 1:1:

Ընդլայնվում է սիբիրախտի հարուցչի դեմ ակտիվ նյութերի տեսականին:

-
- (51) 7 B01J 20/26 (11) 1665 (13) A2
B01J 20/30
(21) P20050056 (22) 29.04.2005
(42) 13.06.2005
(71) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM), Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (RU)
(72) Ռուդոլֆ Գրիգորի Գեւորգյան (AM), Յակոբ Յովհաննեսի Սարգսյան (AM), Տիգրիս Արմենակի Գասպարյան (AM), Յայկանդուխտ Արմենակի Փիլոյան (AM), Արմեն Իգնատիոսի Մարտիրյան (AM), Լեւոն Անդրանիկի Ներսեսյան (AM), Վովկա Արամի Աթոյան (AM), Սուրեն Երեմի Գոգինյան (AM)
(73) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM), Միջազգային գիտատեխնիկական կենտրոն, Մոսկվա, Լուգանսկայա 9, փ/ա 25 (RU)
(54) Հատիկավոր սորբենտի ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է օրգանահանքային սորբենտների ստացման եղանակներին եւ կարող է կիրառվել ջրի փափկացման, ինչպես նաեւ հեղուկ ճառագայթաակտիվ թափոնների մաքրման համար:

Բնական ցեոլիթը մշակվում են բազմափնիլ-բուտիրալի 3-10%-անոց սպիրտային լուծույթով, ապա հատիկավորում եւ ստացված հատիկները չորացնում վակուումում 20-80°C ջերմաստիճանում:

Պարզեցվում է եղանակը, բարձրացվում սորբենտի որակը:

-
- (51) 7 B23D 45/04 (11) 1666 (13) A2
(21) P20050050 (22) 22.04.2005
(42) 13.06.2005
(71) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
(72) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
(73) Ալեքսան Մկրտչի Արզումանյան, Գյումրի, Սելյան 47, բն. 5(AM)
(54) Ալմաստային սղոցաշրջան
(57) Գյուտը վերաբերում է սղոցող գործիքներին

եւ կարող է կիրառվել պինդ նյութերը գնդաձեւ մակերեսային սղոցելու համար:

Ալմաստային սղոցաշրջանն ունի իրան եւ դրա մակերեսային եզրերին նստեցված ալմաստային շերտ: Իրանը կատարված է գնդաձեւ սնամեջ սեգմենտի տեսքով, իսկ ալմաստային շերտը նստեցված է իրանի ներքին եւ արտաքին մակերեսային եզրերին:

Ապահովվում է նյութի օգտագործման արդյունավետությունը, 2 նկ.:

-
- (51) 7 B24B 9/02 (11) 1667 (13) A2
G04D 3/06
(21) P20050021 (22) 10.03.2005
(42) 12.05.2005
(71) Ալեքսան Արզումանյան (AM), Սերյոժա Յակոբյան (AM)
(72) Ալեքսան Արզումանյան (AM), Սերյոժա Յակոբյան (AM)
(73) Ալեքսան Արզումանյան, Գյումրի, Սելյան 47, բն. 5 (AM), Սերյոժա Յակոբյան, Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան (AM)
(54) Ժամացույցի թվատախտակի ծածկույթի գազաթների լծորդման հարմարանք
(57) Գյուտը վերաբերում է ժամացույցի թվատախտակի թափանցիկ ծածկույթի պատրաստման բնագավառին եւ կարող է կիրառվել ոսկյա ժամացույցների արտադրությունում:

Ժամացույցի թվատախտակի ծածկույթի գազաթների լծորդման հարմարանքն ունի հիմքասալի վրա, նրա հարթությանը ուղղահայաց առանցքի շուրջը դարձեր կատարելու հնարավորությամբ տեղակայված դարձուկ: Դարձուկի վրա տեղակայված է դարձկեն սեղան, որն ունի ժամացույցի թվատախտակի ուղղանկյուն պրիզմայաձեւ ծածկույթի ամրակցման վակուումային հանգույց, ընդ որում դարձկեն սեղանի պտտման առանցքը զուգահեռ է դարձուկի դարձերի առանցքին:

Մեկ տեղակայումով հղկմամբ լծորդվում են թիթեղիկի բոլոր չորս գազաթների շառավիղները, 5 նկ.:

-
- (51) 7 C02F 1/52 (11) 1668 (13) A2
(21) P20050014 (22) 22.02.2005
(42) 12.05.2005

(71) «ՀՀ ջրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ (AM)

(72) Գոհար Շահենի Հովսեփյան (AM), Սուրեն Համբարձումի Մարտիրոսյան (AM), Մարտին Շահենի Հովսեփյան (AM), Գագիկ Հմայակի Մարտիրոսյան (AM), Ռոբերտ Արմինի Նազարյան (AM)

(73) «ՀՀ ջրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ, Երեւան, Արմենակ Արմենակյան 125 (AM)

(54) Ծանր մետաղների իոններ պարունակող կեղտաջրերի մաքրման եղանակ

(57) Ալմաստի արտադրության նիկելի եւ մանգանի իոններ պարունակող կեղտաջրերը առանձնացնում են քրոմի իոններ պարունակող կեղտաջրերից, ապա մշակում նատրիումի մետասիլիկատի լուծույթով pH 8-9 արժեքում: Ստացված մածուցիկ նստվածքները չորացնում են 85-90°C ջերմաստիճանում, որից հետո շիկացնում 950-1200°C ջերմաստիճանում եւ ստանում համապատասխան մետաղների նստվածքներ:

Ապահովվում է կեղտաջրերում պարունակվող վնասակար ծանր մետաղների իոնների համալիր օգտահանումը:

(51) 7 C07D 239/24 (11) 1669 (13) A2

(21) P20050061 (22) 05.05.2005

(42) 13.06.2005

(71) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Վռամ Վաղինակի Դովլաթյան (AM), Տաիրա Զարգանդի Պապոյան (AM), Ֆրունզե Վազգենի Ավետիսյան (AM), Արայիկ Բարդուղիմեոսի Նազարյան (AM), Ռոբերտ Մեսրոբի Առաքելյան (AM)

(73) «Հայկական գյուղատնտեսական ակադեմիա» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Ֆունգիցիդային ակտիվություն ունեցող 2-քլոր-4-(երկմեթիլերկթիոկարբամոիլ)-6-մեթիլպիրիմիդին

(57) Հայտարկված է ֆունգիցիդային ակտիվություն ունեցող 2-քլոր-4-(երկմեթիլերկթիոկարբամոիլ)-6-մեթիլպիրիմիդին:

2,4-երկքլոր-6-մեթիլպիրիմիդինը լուծում են ացետոնում, լուծույթին ավելացնում են նատրիումի երկմեթիլերկթիոկարբամատի բյուրե-

ղահիդրատի ջրացետոնային լուծույթ, տաքացնում խառնուրդը, որից հետո հեռացնում են լուծիչը եւ մշակում արգասիքը:

Ընդլայնվում է ֆունգիցիդային միացությունների տեսականին, բարձրացվում դրանց ակտիվությունը:

(51) 7 C08J 9/06

(11) 1670

(13) A1

C08J 9/08

C08J 9/10

(21) P20030109

(22) 01.02.2002

(85) 22.09.2003

(86) PCT/US 02/02782, 01.02.2002

(87) WO 02/068515 06.09.2002

(42) 12.07.2004

(31) 60/270.688

(32) 23.02.2001

(33) US

(71) Ֆեթ Քուշն ԼԼԲ (US)

(72) Հոանգ, Բինհ Վան (VN), Քոֆֆլեր, Ադամ, Ջ. (US), Հոփվուդ, Դոնալդ, Վ. (US)

(73) Ֆեթ Քուշն ԼԼԲ (US)

(74) Է. Նահապետյան

(54) Փրփրամիջադիր, դրա ստացման եղանակ (տարբերակներ) եւ կիրառումը

(57) Հայտարկված է փրփրամիջադիր, որը ներառում է առնվազն կաուչուկ եւ ռետին, փրփրագոյացուցիչ, պոլիմերային կաշման վերափոխիչ, տրոհումն արագացնող ազդանյութ եւ լայնականորեն կապակցող ազդանյութ: Կաուչուկը, ռետինը, փրփրագոյացուցիչը, պոլիմերային կաշման վերափոխիչը եւ տրոհումն արագացնող ազդանյութը ենթարկում են հպման, այնուհետեւ ստացված խառնուրդը ենթարկում են հպման լայնականորեն կապակցող ազդանյութի հետ, որից հետո խառնուրդը փռում են եւ ձեւավորում մեկ կամ ավելի շերտեր, որոնք մամլում են բարձր ջերմաստիճանի եւ բարձր ճնշման պայմաններում ձեւավորելով փրփրամիջադիր:

Ապահովվում է փրփրամիջադիրների դիմացկունությունը եւ մաշակայունությունը, 7 անկախ կետ:

(51) 7 C11B 9/02

(11) 1671

(13) A2

C11B 1/10

(21) P20050039

(22) 05.04.2005

(42) 12.05.2005

(71) «ՔԵԹՐԻՆ» ՍՊԸ (AM)

(72) Միհրան Սուրենի Պողոսյան (AM), Գարեգին Լեւոնի Մանուկյան (AM), Ռաֆիկ Անտոնի Մելիքյան (AM), Մարետտա Մակիչի Ստեփանյան (AM)

(73) «ՔԵԹՐԻՆ» ՍՊԸ, Երեւան, Ռուբինյանց 29ա (AM)

(54) Ադամաթի յուղի ստացման եղանակ

(57) Բուսական հումքը՝ ադամաթի կեղեւն ու միջուկը, մանրացնում են 0,5-1,0 սմ չափի, ապա 60-70°C ջերմաստիճանում 1-1,5 ժամվա ընթացքում պարբերաբար խառնելով ենթարկում լուծահանման գտած եւ հոտազերծված բուսական յուղով, հումքի եւ բուսական յուղի (1-1,5):(1,5-2,0) զանգվածային հարաբերակցությամբ: Ջտմամբ անջատում են ադամաթի յուղային լուծանգուլը, որն օգտագործում են որպես բուսական յուղ հումքի թարմ չափաբաժինների մշակման համար, ընդ որում գործընթացը կրկնում են 10-12 անգամ:

Կրճատվում է եղանակի տեւողությունը եւ բարձրացվում կորզվող յուղի ելքը:

(51) 7 C21D 1/60 (11) 1672 (13) A2
C21D 1/70
C21D 1/78

(21) P20050040 (22) 05.04.2005

(42) 12.05.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Անահիտ Պարոնյան (AM), Սուրեն Աղբալյան (AM), Ալբերտ Գեւորգյան (AM), Շուշիկ Շուշանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Միման միջավայր եւ դրա կիրառմամբ միման ժամանակ դետալների սառեցման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է մետաղների ջերմային մշակման բնագավառին:

Միման միջավայրը պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ. %.

JIMMA-M մակնիշի քլորապրենի համապուլիմերային լատեքս՝ 0.7-2.5, ջուր՝ մնացածը: Դետալները տաքացնում են մինչեւ միման ջերմաստիճան եւ ստանում առատեմիտ, որը գերսառեցնում են միման միջավայրում մինչեւ մար-

տենսիտային փոխակերպումը: Որպես միման միջավայր օգտագործում են վերը նշված միման միջավայրը: Դետալները գերսառեցված առատեմիտի նվազագույն կայունության շրջանում սկզբում տեղաշարժում են այդ միջավայրում, ապա պահում անշարժ վիճակում մինչեւ մարտենսիտային փոխակերպման ավարտը: Տեղաշարժումը իրականացնում են 0,5xh վայրկյանի ընթացքում, որտեղ h-ը դետալի նվազագույն չափն է մմ-ով արտահայտված:

Բարձրանում է եղանակի արդյունավետությունը, 2 անկախ կետ:

(51) 7 C23C 14/02 (11) 1673 (13) A2

(21) P20050017 (22) 25.02.2005

(42) 11.04.2005

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Էմմա Առաքելովա (AM), Գոհարիկ Ասատրյան (AM), Ֆրիդրիխ Գրիգորյան (AM), Գայանե Պետրոսյան (AM), Գագիկ Միրզոյան (AM), Ալվարդ Միրզոյան (AM), Վերգինե Փարվանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Ցինկի օքսիդի նստեցման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ցինկի օքսիդի նստեցմանը հարկադրված ֆազային անցման միջոցով եւ կարող է օգտագործվել թաղանթների աճեցման համար:

Ջրածնի գոլորշիները ուղղում են ցինկի օքսիդից պատրաստված թիրախ եւ սիլիցիումի օքսիդի տակդիր ունեցող հոսքային ռեակտոր, միաժամանակ տաքացնում են տակդիրն ու թիրախը եւ տակդիրի վրա նստեցնում ցինկի օքսիդը: Թիրախը նախապես 2-7 ժամ տեւողությամբ ճառագայթահարում են ուլտրամանուշակագույն ճառագայթներով:

Եղանակը հնարավորություն է տալիս ավելացնել նստեցվող ցինկի օքսիդի քանակը աճեցվող թաղանթներում, 1 նկ.:

(51) 7 E04B 1/76 (11) 1674 (13) A2

E04B 2/92

(21) P20050006 (22) 04.02.2005
(42) 11.03.2005
(71) Գեւորգ Թամարյան (AM)
(72) Գեւորգ Թամարյան (AM)
(73) Գեւորգ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մոլդովական 30/3, բն. 17 (AM)
(54) Պատի ջերմամեկուսիչ պանել
(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ շենքերի ջերմամեկուսիչ պանելների կառուցվածքներին եւ կարող է օգտագործվել բնակելի եւ հասարակական շենքերի շինարարությունում:

Ջերմամեկուսիչ պանելն իրենից ներկայացնում է ուղղանկյուն զուգահեռանիստի ձեւ ունեցող կառուցվածք, որն ունի երկու ջերմամեկուսիչ եւ կոշտության կողեր ունեցող մեկ երկաթբետոնե կառուցվածքային շերտ: Պանելի երկաթբետոնե շերտը տեղակայված է ջերմամեկուսիչ շերտերի միջեւ: Նվազում են ջերմային կորուստները եւ մթնոլորտային գործոնների ազդեցությունը շենքի կառուցվածքային տարրերի վրա, 2 նկ.:

(51) 7 E04B 5/00 (11) 1675 (13) A2
E04B 5/48
(21) P20050048 (22) 20.04.2005
(42) 13.06.2005
(71) Գեւորգ Թամարյան (AM)
(72) Գեւորգ Թամարյան (AM)
(73) Գեւորգ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մոլդովական 30/3, բն. 17 (AM)
(54) Սեյսմակայուն շենքի միաձույլ կարկասաբլոկային համակարգ
(57) Համակարգը ներառում է ամրանային ելուստներ ունեցող եւ միաձույլ եղանակով միակցված պատի պանելներ: Պանելների կողային նիստերն ունեն ընդլայնական կտրվածքում (աձեւ պրոֆիլ առաջացնող փորվածքներ, որոնք պանելների միակցման ժամանակ առաջացնում են բետոնացման ընդհանուր տարածություն: Ամրանային ելուստների մեջ տեղադրված են ամրանային ձողեր:

Պարզեցվում է համակարգի հավաքումը, բացառվում է շինարարական տախտակամածերի օգտագործումը, 4 նկ.:

(51) 7 E04C 1/00 (11) 1676 (13) A2
E04C 2/06
(21) P20050020 (22) 05.03.2005
(42) 11.04.2005
(71) Գեւորգ Թամարյան (AM)
(72) Գեւորգ Թամարյան (AM)
(73) Գեւորգ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մոլդովական 30/3,
(54) Որմնաքար
(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ ամրանավորվող որմնաքարերին եւ կարող է օգտագործվել երկրաշարժակայուն շինարարությունում:

Որմնաքարն իրենից ներկայացնում է ուղղանկյուն զուգահեռանիստ եւ ունի ամրանների տեղադրման փորվածքներ, որոնք արված են որմնաքարի վերին նիստի պարագծով եւ ընդլայնական ուղղությամբ կենտրոնով, կողային նիստերի՝ ուղղահայաց կողմերով, ճակատային նիստերի՝ ընդլայնական ուղղությամբ կենտրոնով:

Փոքրանում է ամրանների ծախսը, վերանում է զոդման աշխատանքների անհրաժեշտությունը, 4 նկ.:

(51) 7 E04H 9/02 (11) 1677 (13) A2
E04H 9/06
(21) P20050038 (22) 01.04.2005
(42) 13.06.2005
(71) Մարտուն Սահակյան (AM)
(72) Մարտուն Սահակյան (AM)
(73) Մարտուն Սահակյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն.31 (AM)
(54) Երկրաշարժից պաշտպանող ապաստարան
(57) Ապաստարանն ունի իրան, մուտքի ու ելքի դռնակներ, օդափոխիչ անցքեր: Իրանը երկու խցիկ ունեցող ուղղանկյուն զուգահեռանիստ է, հավաքված է շվելերներից, պտուտամեխերի միջոցով երեսպատված է մետաղական թիթեղներով: Իրանը բոլոր նիստերին ունի մետաղական բռնիչներ: Խցիկներն ունեն պատուհաններ, եւ դրանց ներսի պատերը երեսպատված են պենոպլաստե սալիկներով, իսկ խցիկների ներսում տեղակայված է ամրագոտի ունեցող աթոռ:

Բարձրանում է ապաստարանի հուսալիությունը, պարզեցվում է կառուցվածքը, 3 նկ.:

- (51) 7 G02F 1/39 (11) 1678 (13) A2
G01K 13/04
- (21) P20050042 (22) 11.04.2005
(42) 13.06.2005
- (71) Ռուբեն Սիմոնի Ասատրյան (AM)
(72) Ռուբեն Սիմոնի Ասատրյան (AM), Հայկ Գեւորգի Գեւորգյան (AM), Համլետ Սուրենի Կարայան (AM), Հովհաննես Վարդանի Հովհաննիսյան (AM), Մարտին Նշանի Միսակյան (AM), Գագիկ Կորյունի Մարյան (AM)
(73) Ռուբեն Սիմոնի Ասատրյան, Երեւան, Միսակյան 2, բն. 305 (AM)
(54) Սպեկտրաճառագայթաչափ
(57) Սպեկտրաճառագայթաչափն ունի մուտքային հայելային օբյեկտիվ, հենարանային ջերմային խոռոչ, մուտքային օբյեկտիվի կիզակետային հարթությունում տեղակայված ճառագայթման մոդուլարար, երկու դիտափող, երկու պրոյեկցիոն օբյեկտիվ, լուսազտիչ եւ լուսընդունիչ: Առաջին պրոյեկցիոն օբյեկտիվի կիզակետերից մեկը համատեղված է մուտքային օբյեկտիվի կիզակետի հետ: Երկրորդ պրոյեկցիոն օբյեկտիվի կիզակետերից մեկը գտնվում է առաջին պրոյեկցիոն օբյեկտիվի կիզակետային հարթության մեջ, իսկ երկրորդ կիզակետում տեղակայված է լուսընդունիչի զգայուն մակերեսը: Պրոյեկցիոն օբյեկտիվների ընդհանուր կիզակետում տեղակայված է լուսազտիչը:
- Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրացվում է զգայունությունը, 2 նկ.:

- (51) 7 H01H 37/54 (11) 1679 (13) A2
(21) P20050041 (22) 06.04.2005
(42) 13.06.2005
- (71) Արմեն Անտոնյան (AM)
(72) Հայկ Մամիկոնի Մարգարյան (AM)
(73) Արմեն Անտոնյան, Երեւան, Այգեստան 10, բն.1 (AM)
(54) Ջերմաերկմետաղական ռելե
(57) Ռելեն ունի մետաղական թասածեւ իրանի եւ մի կողմից երկաստիճան գլանաձեւ ելուստ ունեցող էլեկտրամեկուսիչ նյութից կափարիչի միակցումից ձեւավորված խցիկ: Խցիկում տեղադրված են երկու անշարժ հպակներ, որոնք իրենց արտանցիչներով համաչափորեն ամրակցված են

կափարիչի իրանում, նրա եզրի ու երկաստիճան ելուստի արանքում, եւ ջերմազգայուն փոխարկիչ մեխանիզմը: Վերջինս բաղկացած է երկաստիճան ելուստի առաջին աստիճանը ձեւավորող գլանի վրա իր կենտրոնական անցքով հազցված՝ մի կողմով անշարժ հպակների հետ փոխադրող, իսկ մյուս կողմի տրամագծորեն հակառակ եզրերի վրա ելուստ սահմանափակիչներ ունեցող հոսանքահաղորդիչ կամրջակից, զսպանակից, որի կենտրոնական մեցուկային մասը ամրակցված է երկաստիճան ելուստի միջանկյալ հարթակի վրա, իսկ եզրը փոխադրում է կամրջակի ներքին մակերեսի հետ եւ կամրջակի ելուստ սահմանափակիչների եւ զսպանակի արանքում ազատ դիրքորոշվելու հնարավորությամբ տեղադրված ջերմազգայուն երկմետաղական սկավառակից, որի կենտրոնական անցքում տեղադրված է երկաստիճան գլանաձեւ ելուստի երկրորդ աստիճանը:

Պարզեցվում են ռելեի կառուցվածքը եւ հավաքման տեխնոլոգիան, 3 նկ.:

- (51) 7 H01H 37/54 (11) 1680 (13) A2
(21) P20040141 (22) 22.12.2004
(42) 11.03.2005
- (71) Արմեն Անտոնյան (AM)
(72) Հայկ Մամիկոնի Մարգարյան (AM)
(73) Արմեն Անտոնյան, Երեւան, Այգեստան 10, բն. 1 (AM)
(54) Ջերմաերկմետաղական ռելե
(57) Ռելեն կարող է օգտագործվել միջավայրի ջերմաստիճանը համապատասխան արժեքից շեղվելու դեպքում էլեկտրական շղթայի միացման կամ անջատման համար:
- Ռելեն ունի մետաղական մեկուսատախտակից եւ պատյանից կազմված հերմետիկ խցիկ: Խցիկում տեղադրված են երկու հոծ էլեկտրոդներ, որոնցից մեկին ամրակցված է անշարժ հպակ, իսկ մյուսին՝ ջերմազգայուն փոխարկիչ մեխանիզմ, որը բաղկացած է ջերմազգայուն ակնթարթային գործարկման երկմետաղական սկավառակից, մեցուկային տարրից եւ շարժական հպակով հոսանքահաղորդիչ զսպանակից: Ջերմազգայուն սկավառակը հատած կոն է, որը գմբեթի կենտրոնում եւ հատման մակերեսային պարագծի վրա ունի համապատասխանաբար մեկ եւ

առնվազն երեք համաչափ դասավորված անցքեր: Ջերմազգայուն սկավառակն ազատ դիրքորոշվելու հնարավորությամբ տեղադրված է ելուստ սահմանափակիչներ եւ անշարժ լեզվակ ունեցող հոսանքահաղորդիչ զսպանակի վրա: Գմբեթի եւ զսպանակի արանքում տեղադրված է նեցուկային տարրի օղակաձեւ ելուստը, իսկ նեցուկային տարրի եզրերը տեղակայված են համապատասխանաբար գմբեթի կենտրոնական եւ լեզվակի անցքերում:

Ռեւեն էլեկտրաանվտանգ է, ունի գործարկման ջերմաստիճանի բարձր վերին սահման, փոքր եզրաչափեր, պարզ կառուցվածք եւ սարքաբերման տեխնոլոգիա, 7 նկ.:

(51) 7 H01H 37/66 (11) 1681 (13) A2
(21) P20050003 (22) 26.01.2005
(42) 11.04.2005

(71) Արմեն Անտոնյան (AM)

(72) Հայկ Մամիկոնի Մարգարյան (AM)

(73) Արմեն Անտոնյան, Երեւան, Այգեստան 10, բն. 1 (AM)

(54) Ջերմակարգավորիչ

(57) Ջերմակարգավորիչն ունի հիմքից եւ կափարիչից ձեւավորված խոռոչ, որում տեղադրված են երկմետաղական ժապավենից Ս-աձեւ պրոֆիլով ճկված ջերմազգայուն տարր, որի շարժունակ ծայրի վրա ամրակցված են հաստատուն մագնիս, էլեկտրամեկուսիչ նյութից պատրաստված փոխանցիչ տարր, որի վրա տեղադրված է շարժունակ հպակով հոսանքահաղորդիչ շերտաձող: Ջերմազգայուն տարրի մյուս ծայրը միացված է հիմքի ելունդի շարժունակ ծայրի հետ: Հիմքի ելունդը թեք տեղադրված է ջերմազգայուն տարրի Ս-աձեւ բացվածքում եւ շարժունակ ու անշարժ ծայրերի արանքում ունի զսպանակ եւ ծայրերը միակցող ու նրանց միջեւ բացակի մեծությունը կարգավարող պտուտակ: Ջերմակարգավորիչի հիմքի վրա, հաստատուն մագնիսի հետ փոխազդելու հնարավորությամբ տեղադրված է հաստատուն մագնիսի փոխազդեցության բացակը կարգավորող սեւեռապնդիչ պտուտակը եւ շարժունակ հպակների հետ փոխազդելու հնարավորությամբ անշարժ հպակներով սեղմակներ:

Պարզեցվում է ջերմակարգավորիչի կառուցվածքը, 3 նկ.:

(51) 7 H01M 2/14 (11) 1682 (13) A2
H01M 10/10

(21) P20050022 (22) 11.03.2005
(42) 12.05.2005

(71) Սուրեն Մարտիրոսյան (AM), Նելլի Ավագյան (AM)

(72) Սուրեն Մարտիրոսյան (AM), Նելլի Ավագյան (AM)

(73) Սուրեն Մարտիրոսյան, Երեւան, Խանջյան 31, բն.37 (AM), Նելլի Ավագյան, Գեղարքունիքի մարզ, քաղաք Սեւան, Խաղաղության 2, բն. 39 (AM)

(54) Ալկալիական կուտակիչ

(57) Ալկալիական կուտակիչն ունի ցինկի բացասական էլեկտրոդ, դրական էլեկտրոդ, հիմնային էլեկտրոլիտ, պոլիմերային միկրոծակոտկեն զատիչ, որի ծակոտիներում նստեցված է ամորֆ նիկելի հիդրօքսիդ: Բարելավվում են ալկալիական կուտակիչների շահագործման եւ պատրաստման տեխնոլոգիական բնութագրերը:

(51) 7 H02P 9/30 (11) 1683 (13) A2
(21) P20040117 (22) 08.10.2004
(42) 11.02.2005

(71) Աշոտ Հարությունյան (AM)

(72) Աշոտ Հարությունյան (AM)

(73) Աշոտ Հարությունյան, Երեւան, Շիրվանզադեի 4, բն. 6 (AM)

(54) Փոփոխական լարումը կարգավորող սարք

(57) Փոփոխական լարումը կարգավորող սարքն ունի կարգավորող թիրիստորով կիսահաղորդչային կարգավորիչ, ինդուկտիվ զտիչ եւ էներգիայի սպառիչ: Կիսահաղորդչային կարգավորիչը կազմված է կարգավորող թիրիստորից եւ երկկիսապարբերական ուղղիչ կամրջակից, որի փոփոխական մուտքի առաջին սեղմակին հաջորդաբար միացված է էներգիայի սպառիչը, երկկիսապարբերական ուղղիչի մուտքի երկրորդ սեղմակը միացված է անմիջապես էլեկտրական ցանցի զրոյին: Ինդուկտիվ զտիչը եւ կարգավորող թիրիստորի անոդը հաջորդաբար միացված են ուղղիչի հաստատուն լարման դրական բեւեռին, իսկ կարգավորող թիրիստորի կաթոդը միացված է երկկիսապարբերական ուղղիչի բացասական բեւեռին:

Բարելավվում են սարքի տեխնիկատնտեսական ցուցանիշները, 2նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՍՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
Ս օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ
հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A47B 27/00 (11) 96 (13) U
(21) U20050179 (22) 20.09.2005
(71) Յենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM)
(72) Յենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM),
Արտյուշա Ապրեսի Ղուկասյան (AM), Գուրգեն
Սուրենի Խուդոյան (AM), Կարեն Խաչիկի Աճեմյան
(AM), Արայիկ Արշալույսի Պողոսյան (AM)
(73) Յենրիկ Արտաշեսի Բարսեղյան, Երեւան,
Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM)
(54) Գծագրանկարչական սեղան
(57) Օգտակար մոդելը վերաբերում է մեքենա-
շինական տեխնիկական միջոցներին:

Գծագրանկարչական սեղանի տախտակն ունի
տարբեր ուղղություններով եւ թեքության անկյան
տակ թեքման հնարավորություն: Դրա ներքին
կողմն հողակապորեն միացված է հենադարակ,
իսկ երկու կողերին՝ փորակավոր պահիչ զոլակ-
ներ: Ելունների միջոցով հենադարակը պահիչ
զոլակների տարբեր փորակներին կառչելով,
ապահովվում է դրա հորիզոնական դիրքը անկախ
տախտակի թեքված դիրքերից, 1 նկ.:

(51) 7 A63F 7/36 (11) 97 (13) U
A63F 3/02
(21) U20050082 (22) 31.05.2005
(71) Արամ Ալոյան (AM)
(72) Արամ Ալոյան (AM)
(73) Արամ Ալոյան, Արագածոտնի մարզ, գյուղ
Վարդենուտ (AM)
(54) Խաղատախտակ
(57) Օգտակար մոդելը վերաբերում է սեղանի
խաղերին, ինչպիսիք են՝ շախմատը, տամայախաղը,
նարդին եւ կարող է կիրառվել խաղատախտակների
ճամփորդական կատարումներում:

Խաղատախտակն ունի հողակապերով իրար
միակցված երկու կիսատախտակներ, որոնք
ծալված դիրքում կազմում են խաղաքարերը
պահելու տուփ, ընդ որում խաղաքարերն ունեն
զլանաձեւ ելուստներ, իսկ յուրաքանչյուր կիսա-
տախտակի արտաքին մակերեսների վրա կան
այդ ելուստների տրամագծին համապատասխան
անցքեր, խաղաքարերի ելուստների համար
անցքեր կան նաեւ կիսատախտակների ներքին

մակերեսների վրա: Կիսատախտակներն ունեն
հավասարակողմ եռանկյունու ձեւ: Խաղաքարերի
ելուստների համար անցքերը յուրաքանչյուր
կիսատախտակի արտաքին մակերեսների վրա
դասավորված են ըստ 36 հավասարակողմ եռան-
կյունիների երկրաչափական կենտրոնների, իսկ
ներքին մակերեսների վրա՝ ըստ կիսատախ-
տակի հողավոր կողմին զուգահեռ գծերի:

Ընդլայնվում են խաղի հնարավորությունները,
4 նկ.:

(51) 7 B65D 81/32 (11) 98 (13) U
B65D 1/04
(21) U20050031 (22) 25.03.2005
(31) AU 2004 001257 (32) 26.03.2004 (33) GE
(71) Գոչա Պիպիյա (GE)
(72) Գոչա Պիպիյա (GE)
(73) Գոչա Պիպիյա (GE)
(74) Ա. Գալոյան
(54) Երկանոթանոց շիշ
(57) Օգտակար մոդելը վերաբերում է հեղուկների
պահպանման ամանեղենին, մասնավորապես՝
շիշերին, որոնք ունեն երկու անոթ տարբեր հեղուկ-
ների պահպանման համար:

Երկանոթանոց շիշ անոթները մեկուսացված
են իրարից եւ ունեն առանձին վզիկներ, ընդ
որում շիշ մեկ անոթը տեղակայված է մյուսում:
Ներքին անոթն ունի խողովակաձեւ տարր, որը
դուրս է բերված արտաքին անոթի պատի միջով
եւ ունի ցցվող մաս, որն իրենից ներկայացնում
է ներքին անոթի վզիկը: Արտաքին եւ ներքին
անոթներն իրականացված են թափանցիկ նյութից
եւ ունեն միեւնույն կամ տարբեր ներկվածք, կամ
երկու անոթներն էլ անգույն են, կամ արտաքին
անոթը իրականացված է թափանցիկ նյութից, իսկ
ներքին անոթը՝ անթափանցիկ, եւ նրանք ունեն
տարբեր ներկվածք: Ներքին անոթն ունի, օրինակ՝
խաղողի ողկույզի ուրվագիծը, իսկ խողովակաձեւ
տարրը՝ վազի հետ խաղողի ողկույզի պոչուկի
ուրվագիծը:

Բարձրացվում է շիշ օգտագործման հարմա-
րությունը, 1 նկ.:

(51) 7 C05F 17/02 (11) 99 (13) U
 (21) U20050144 (22) 05.08.2005
 (71) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM), Մարինե
 Հենրիկի Բարսեղյան (AM)
 (72) Հենրիկ Արտաշեսի Բարսեղյան (AM), Մարինե
 Հենրիկի Բարսեղյան (AM)
 (73) Հենրիկ Բարսեղյան, Երեւան, Գարեգին
 Նժդեհի 30/3, բն. 31 (AM), Մարինե Բարսեղյան,
 Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն. 31 (AM)
 (54) Խրամատների համակարգ կենսահումուսի
 ստացման համար
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է գյուղա-
 տնտեսությանը, մասնավորապես՝ կենսահումուսի
 ստացման խրամատների համակարգերին: Կենսա-
 հումուսի ստացման խրամատների համակարգն
 ունի հաջորդաբար տեղադրված եւ իրարից միջ-
 նապատերով բաժանված խրամատներ: Միջնա-
 պատերի ստորին մասում կատարված են միջանցիկ
 անցուղիներ՝ խրամատները մեկը մյուսի հետ
 հաղորդակցվելու (կապելու) համար:
 Միջնապատերի անցուղիներով պատրաստի
 կենսահումուսի խրամատից որդերն ինքնակամ
 տեղափոխվում են հաջորդ՝ թարմ սուբստրատով
 լցված խրամատ, որտեղ կոնվեյերային (հոսքային
 գծի) եղանակով շարունակվում է կենսահումուսի
 ստացումը: Ապահովվում է խրամատների միջեւ
 որդերի տեղափոխման ձեռքի աշխատանքի
 բացառման հնարավորությունը, 1 նկ.:

(51) 7 F04B 27/02 (11) 100 (13) U
 (21) U20050167 (22) 12.09.2005
 (71) «ՄԻՄ-USUL» ՍՊԸ (AM)
 (72) Ալբերտ Ազարյան (AM), Համլետ Չոբանյան

(AM), Համլետ Հովհաննիսյան (AM), Ռուբեն
 Եսայան (AM), Կարո Սոֆյան (AM), Յուրիկ
 Շահինյան (AM)
 (73) «ՄԻՄ-USUL» ՍՊԸ, Վանաձոր, Խնձորուտ
 1/25 (AM)
 (54) Գազային ճնշակ
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է բարձր
 ճնշման գազային ճնշակներին:

Գազային ճնշակն ունի իրան, որին իրար
 հակադիր կոշտ ամրակցված են միմյանց կոշտ
 միակցված երկուական տարբեր տրամագծի
 աշխատանքային գլաններ՝ իրենց հետադարձ-
 առաջընթաց շարժման մխոցներով, որոնք իրար
 միակցված են մեկ ընդհանուր մխոցակոթով, իսկ
